ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում

Իրականացման ժամանակահատված: 20.05.2021 - 29.02.2024

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 2 000 000

Ընդհանուր բյուջե: € 2 071 650

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNDP, UNICEF, UNFPA, OSCE

Նախագծի նկարագրություն

Ծրագրի նպատակն է աջակցել իրավունքիգերակայության, անվտանգության, մարդու իրավունքների պաշտպանության և սահմանադրական բարեփոխումների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության (ՀՀ կառավարություն)՝ ներառական, հաշվետու և արդյունավետ ծառայությունների մատուցմանն ուղղված ջանքերին: Այս հանձնառությունը կնպաստի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) դրույթների, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված ճանապարհային քարտեզի իրականացմանը, որն առնչվում է իրավունքիգերակայության և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքին: Շեշտը դրվելու է լավ կառավարման, խտրականության բացառման և գենդերային հավասարության, փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների, արդարադատության և անվտանգության բարեփոխումների վրա: Ծրագիրը հավասարապես կնպաստի “2030 Օրակարգի” իրականացմանը՝ հիմնական ուշադրությունը հարձնելով Կայուն զարգացման նպատակ (ԿԶՆ) 16-ի (խաղաղություն, արդարություն և ամուր ինստիտուտներ), ԿԶՆ 10-ի (անհավասարությունների կրճատում) և ԿԶՆ 5-ի (գենդերային հավասարություն) վրա:
Ծրագրի երեք բաղադրիչներն են ՝ Մարդու իրավունքներ, Ոստիկանության բարեփոխումներ և Սահմանադրական բարեփոխումներ:
Ծրագիրն իրականացվելու է ՄԻՊ գրասենյակի, Արդարադատության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակի, Աշխատանքի և սոցիալական հարցերի

Ակնկալվող արդյունքներ:

Մարդու իրավունքներ.
-ՄԻՊ գրասենյակի և մարդու իրավունքների պաշտպանության համապատասխան հանրային մարմինների (ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակի) կարողությունները հզորացված են ազգային և մարզային մակարդակում, այդ թվում՝ մշտադիտարկման և հաշվետվողականության գործառույթներում:
-Մարդու իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկմանը խթանող միջոցառումներն իրականացված են՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերի իրավունքների վրա:
-2020-2022թթ. մարդու իրավունքների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրն արդյունավետորեն իրականացված են, ինչպես նաև 2023-2025 թթ. ժամանակաշրջանի համար մշակված է նոր Գործողությունների ծրագրի:
Ոստիկանության բարեփոխումներ.
-Ոստիկանության՝ բարեփոխումներ իրականացնելու կարողությունները հզորացված են մարդկային ռեսուրսների բարելավված որակի և իրազեկվածության միջոցով:
-Արդյունավետ վերհսկողության, ինչպես նաև հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարգության ապահովման նպատակով՝ Ոստիկանության ինստիտուցիոնալ կարողությունները զարգացած են: